

Դաշտադեմ

Մակերես՝ 18,0կմ²

Բնակչություն՝ 129

Տնային տնտեսությունների թիվը՝ 35:

Գյուղ Տաշիրի տարածաշրջանում, Տաշիր քաղաքից 10 կմ հարավ-արեւմուտք, մարզկենտրոնից գտնվում է 62 կմ հեռավորության վրա: Նախկին ունեցել է Իլմազլու անվանումը, Դաշտադեմ է վերանվանվել 1991 թ-ին:

Բարձրությունը ծովի մակարդակից 1650 մետր: Կլիման բարեխառն է, ձմեռը երկարատև ու ցրտաշունչ, ամառը զով: Գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 1539,7 հա, որից՝ 269,9 հա վարելահող, 888,5 հա խոտհարք, 344,9 հա արոտ: Ունի հիմնական դպրոց, բուժկետ, փոստի բաժանմունք: Գյուղի մասնագիտացման ուղղությունը անասնապահությունն է: Չբաղվում են նաև մեղվաբուծությամբ:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցի հիմնանորոգումը, գազաֆիկացումը, խմելու ջրագծերի ներքին ցանցի վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքների իրացումը, միջհամայնքային և գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը: